



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52, (+374 10) 55-46-41 (Fax), info@ysu.am, www.ysu.am

Հ Ր Ա Մ Ա Ն

N 44/58-1 «10» հունիս 2022թ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Հանրակացարանում (այսուհետ՝ Հանրակացարան) կեցության և սպասարկման վճարովի ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու նպատակով, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետով, 20-րդ կետի 11-րդ ենթակետով.

Հրամայում եմ

1. Սահմանել, որ՝
 - 1.1. Հանրակացարանում կեցության և կենցաղի սպասարկման վճարովի ծառայություններ են մատուցվում ԵՊՀ ուսանողներին, այլ բուհերի ուսանողներին,
 - 1.2. Այլ բուհերի ուսանողներին Հանրակացարանում սենյակ հատկացվում է ԵՊՀ ուսանողներին տեղավորելուց հետո թափուր տեղերի առկայության դեպքում,
 - 1.3. Հանրակացարանում մեկ անձի կեցության և կենցաղի սպասարկման ամսական վճարը ԵՊՀ ուսանողների համար կազմում է՝
 - 60000 ՀՀ դրամ **մեկ տեղանոց** սենյակում
 - 45000 ՀՀ դրամ **երկտեղանոց** սենյակում
 - 40000 ՀՀ դրամ **երկտեղանոց** սենյակում
 - 35000 ՀՀ դրամ **երեք տեղանոց** սենյակում
 - 30000 ՀՀ դրամ **չորս տեղանոց** սենյակում
 - 7000 ՀՀ դրամ գիշերակաց **մեկ տեղանոց** սենյակում
 - 10000 ՀՀ դրամ գիշերակաց **երկտեղանոց** սենյակում
 - 1.4 Հանրակացարանում մեկ անձի կեցության և կենցաղի սպասարկման ամսական վճարը այլ բուհերի ուսանողների և օտարերկրյա ուսանողների (բացառությամբ՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության, Սիրիայի, Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի քաղաքացիների) համար կազմում է սույն հրամանի 1.3 կետով սահմանված վճարներից 10 տոկոս ավելի չափով այլ բուհերի ուսանողների և 30 տոկոս ավելի չափով օտարերկրյա ուսանողների համար:

1.5 Հանրակացարանում տեղավորվելու վերաբերյալ դիմումները նախապես պատրաստվում են Հանրակացարանում, ապա աշխատակցի միջոցով ներկայացվում են ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորին: Դիմումները հաստատված անձանց հետ հանրակացարանում կնքվում է պայմանագիր՝ մինչև ուսումնական տարվա ավարտը ժամկետով:

1.6 Հանրակացարանի տնօրեն կառավարիչը կարող է ԵՊՀ ռեկտորին ներկայացնել կեցության համար սույն հրամանով սահմանված վճարները գեղջելու, զիջելու համար:

1.7 Գները ներառում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված և կիրառելի հարկերը:

2. Անվավեր ճանաչել ԵՊՀ ռեկտորի ժ/պ -ի 2021թ. Հուլիսի 15 -ի N 131/154 հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2022 թվականի սեպտեմբերի 1-ից:

4. Սույն հրամանի մասին տեղեկացնել հանրակացարանում բնակվող ԵՊՀ ուսանողներին, այլ բուհերի ուսանողներին և այլ անձանց:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝



Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ